

Հաստատված է,
ՀՀ Տավուշի մարզի Իջևանի Մկրտիչ
Մարտիրոսյանի անվան հիմնական
դպրոցի տնօրեն՝ Ն. Պողոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՊԼԱՆ

Առարկա՝ Ֆիզիկա

Թեմա՝ Էլեկտրական հոսանքի աշխատանքը և հզորությունը: Էներգախնայողություն

Դասարաններ՝ 9բ, 9 գ

Նախագծի ղեկավար՝ Լ.Աղբալյան

2023-2024թթ.

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

9-րդ դասարան,

Առարկա՝ ֆիզիկա

Ուսուցիչ՝ Լ Աղբալյան

Թեմա՝ էլեկտրական հոսանքի աշխատանքը և հզորությունը: Էներգախնայողություն

Նպատակային դասարան – 9-րդ դասարան,

Աշխատանքի ձևը - արտադասարանական հետազոտություն, դասարանական քննարկումներ, գործողությունների իրականացում:

Նպատակը – Իմանալ ի՞նչ է էլեկտրաէներգիան, ինչպե՞ս հաշվել տան ծախսված էլեկտրաէներգիան և կարողանալ տնտեսել էլեկտրաէներգիան:

Վերջնարդյունքները Իմանալ ,թե ինչպե՞ս են հաշվում էլեկտրական հոսանքի աշխատանքը, ի՞նչ սարքի օգնությամբ են հաշվում, կարողանալ կատարել հաշվարկներ՝ մեկ շաբաթվա կտրվածքով և մեկ ամսվա կտրվածքով, տարբերակել շիկացման լամպը ժամանակակից էկոնոմ լամպից, ձեռք բերել տնտեսական կարողունակություն:

Անձնային – ձևավորել կարողունակություններ՝ գիտելիքներ, հմտություններ, դիրքորոշում, արժեքային համակարգ, գիտակցի ,խելամիտ դատողություններ կարողանա անել, խմբի, դասընկերների կարծիքը հաշվի առնելու պատրաստակամություն դրսևորի: Կարողանա հաշվել էլեկտրաէներգիան, կարողանա տնտեսել էլեկտրաէներգիան

Ուսուցանող կարողանա հասկանա և տարբերակի շիկացման լամպը էկոնոմ լամպից: Կարողանա հաշվել տան ծախսված էլեկտրաէներգիան մեկ շաբաթվա և մեկ ամսվա կտրվածքով, կարողանա խելամիտ և հիմնավորված մտքեր կառուցել և եզրակացնել, ե՞րբ էր տնտեսվում էլեկտրաէներգիան, ո՞ր լամպի կիրառման դեպքում էր խնայողություն արվում և էլ ի՞նչ գործոններ են նպաստում էլեկտրաէներգիան խնայելու համար: Կարողանա ցուցաբերի համադասարանցիների կատարած աշխատանքների նկատմամբ հարգանք և գնահատում, կարողանա համեմատել ստացված արդյունքները և կարողանա համակարգել:

Համագործակցություն – Խմբում աշխատելու ունակություն, սեփական կարծիքը մյուսներին ներկայացնելու և համոզիչ լինելու կարողություն: Դիմացիներն լսելու, հարգելու, ընդունելու կամ հիմնավոր առարկելու կարողություն: Փոխզիջումների և բարի մթնոլորտ ստեղծելու ցանկություն:

Հիմնական տերմիններ և հասկացություններ – Էլեկտրական հոսանք, շարժում, էլեկտրական աշխատանք էլեկտրաէներգիա ժամկետ՝ կարճապես

Միջառարկայական կապ՝ ֆիզիկա և մաթեմատիկա

Առաջադրանքի անցկացման պլան

Առաջադրանքի փուլերը	Ուսուցչի գործողությունները	Սովորողների գործողությունները	Արդյունքների գնահատման կոմպետենցիաներ
Խմբերի բաժանում	Ուսուցիչը ներկայացնում է նախագծային աշխատանքի էությունը, փուլերը և հանձնարարում բաժանվել խմբերի	Սովորողները փորձում են ինքնուրույն բաժանվել խմբերի (խմբի անդամների քանակը կախված է դասարանում սովորողների քանակից): Խմբերում ընտրվում է ավագ:	Սովորողների ինքնակազմակերման կարողություններ
Յուրաքանչյուր խմբին հանձնարարություն	Ուսուցիչը տալիս է հանձնարարություն՝ յուրաքանչյուր խմբին. Ուսումնասիրել նախորդ ամսվա էլեկտրական հաշվիչի ցուցմունքը և հաշվել հաջորդ ամսվա էլեկտրաէներգիան:	Սովորողները ծանոթանում են պրոբլեմի հետ, կատարում քննարկում խմբի ներսում և պլանավորում հետագա աշխատանքները:	Առաջադրանքը ընկալելու, գրառելու և խմբում միասնական քննարկում կազմակերպելու և միմյանց լսելու կարողություն

	<p>Քննարկել և պարզաբանել ,ինչպե՞ս,ո՞ր դեպքերում կարելի խնայել էլեկտրաէներգիան:</p> <p>1-ին խումբ` Հաշվել էլեկտրական հոսանքի կատարած աշխատանքը</p> <p>2-րդ խումբ` Հաշվել էլեկտրական հոսանքի հզորությունը</p> <p>3-րդ խումբ` Շիկացման լամպ և ժամանակակից էկոնոմ լամպեր,տարբերությունը</p> <p>4-րդ խումբ `Արդյունքների քննարկում ,խելամիտ և հիմնավորված մտքեր կառուցել և եզրակացնել,ե՞րբ էր տնտեսվում էլեկտրաէներգիան,ո՞ր լամպի կիրառման դեպքում էր խնայողություն արվում և էլ ի՞նչ գործոններ են նպաստում էլեկտրաէներգիան խնայելու համար:</p>		
--	---	--	--

<p>Սահմանվում է հետազոտության ժամկետ՝ 1 ամիս</p>	<p>Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում ուսուցիչը կատարում է հարցում՝ կատարված աշխատանքների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում կատարում փոքրիկ հուշումներ:</p>	<p>Խմբերը տեղեկացնում են, թե ինչ հաջողություններ և ինչ դժվարություններ են ունեցել այդ ընթացքում, հայտնում են իրենց մտքերը, անհրաժեշտության դեպքում ստանում խորհուրդ:</p>	<p>Իրավիճակի գնահատման և առաջացած խնդիրները վեր հանելու կարողություն</p>
<p>Ժամկետի ավարտին</p>	<p>Ուսուցիչը հանձնարարում է վերջնական տեսքի բերել կատարված աշխատանքները և պատրաստվել ներկայացման: Ներկայացման ձևը կարող են ընտրել սովորողները:</p>	<p>Խմբերը կատարում են վերջնական վերլուծություն, արդյունքների ներկայացման ձևի ընտրություն, անհրաժեշտ պարագաների նախապատրաստում:</p>	<p>Տվյալների կազմման, գրանցման մտքերի ձևակերպման և ներկայացման կարողություն՝ խմբում:</p>
<p>Հաշվետու դաս – 1 դասաժամ</p>	<p>Ուսուցիչը կարող է դասին հրավիրել տնօրենությանը, այլ ուսուցիչների, սովորողների, ինչպես նաև ըստ ցանկության կարող են ներկա լինել որոշ ծնողներ: Ուսուցիչը ապահովում է սովորողներին անրաժեշտ նյութերով և դպրոցում առկա տեխնիկայով:</p>	<p>Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, կատարում եզրակացություններ և պատասխանում հարցերին, տրամադրվում է 10 րոպե յուրաքանչյուր խմբին:</p>	<p>Հստակ և համոզիչ խոսելու, եզրակացություններ կատարելու և ներկայացնելու կարողություն:</p>
<p>Ամփոփում և գնահատում</p>	<p>Ուսուցիչն ամփոփում է արդյունքները, տալիս գնահատական, ներկաները հայտնում են կարծիքներ:</p>	<p>30 րոպե ամփոփում, կարծիքների և առաջարկությունների հայտնում:</p>	

Գնահատում

- I Փուլ Սովորողների ինքնակազմակերպման կարողություններ
- II Փուլ Առաջադրանքը ընկալելու, գրառելու, խմբում միասնական քննարկում կազմակերպելու ,միմյանց լսելու կարողություններ
- III Փուլ Իրավիճակի գնահատման և առաջացած խնդիրները վեր հանելու կարողություն
- IV Փուլ Տվյալների կազմման ,գրանցման ,մտքերի ձևակերպման և ներկայացման կարողություն խմբում
- V Փուլ Հստակ և համոզիչ խոսելու,մտքերը ներկայացնելու,եզրակացություններ , առաջարկություններ կատարելու կարողություններ

